ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

---

<<12>> << նոյեմբեր>> 2013 N 128
ք. Եղեգնաձոր

## ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ
## ՎԱՆԻԿ ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՅԱ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 159-րդ, 161-րդ հոդվածի 2-րդ մասով, 162-րդ հոդվածի 1-ին մասով, <<Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասով,Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով , Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի 1384-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի նոյեմբերի 5-ի N487 որոշման 1-ին կետի բ) ենթակետով և հիմք ընդունելով Վանիկ Խուդավերդյանի դիմումը.

**ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ**

1. 2013 թվականի նոյեմբերի 20-ից դեկտեմբերի 30-ը ներառյալ Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ (69-1.2-1) Վանիկ Խուդավերդյանին տրամադրել 2013 թվականի աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն արձակուրդը՝ 20 և լրացուցիչ արձակուրդը՝ 9 աշխատանքային օր տևողությամբ:
2. Վ.Խուդավերդյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում աշխատակազմի ղեկավարի տեղակալի պարտականությունները դնել աշխատակազմի քարտուղարության պետ (69-2.1-7) Հայկ Կարապետյանի վրա:
3. Աշխատանքի ներկայանալու ժամկետը՝ 2014 թվականի հունվարի 8-ին:
4. Հաշվապահին՝ վճարել միանվագ լրացուցիչ արձակուրդային վճար:

Է.ՂԱԶԱՐՅԱՆ